

ՀՐ. ՔՈՇԱՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Ե. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Լայն է Հր. Քոշարի ստեղծագործությունների թեմատիկան: Նրա արձակում պատկերված են հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներ՝ գյուղացիներ, մտավորականներ, զինվորականներ, արհեստավորներ և այլն: Կողք-կողքի հանդիպում են հայն ու ռուսը, ուկրաինացին ու բելուսուսը, ադրբեջանցին ու վրացին, քուրդն ու թուրքը: Տարբեր ազգությունների պատկանող, դանաղան բնագավառներում գործող և հաճախ տարբեր հոգեբանություն ունեցող այս կերպարներին տիպականացնելը հեղինակից պահանջել է, մի կողմից, կյանքի խոր իմացություն, երևույթների հստակ վերլուծության կարողություն, մյուս կողմից՝ մեր հարուստ լեզվի գանձերից օգտվելու հմտություն: Հեղինակը կերտել է ռազմական, մասսայական, քաղաքական, կենցաղային բազմաթիվ պատկերներ: Այգ հանգամանքը, անշուշտ, նպաստել է: որ նրա օգտագործած լեզվական ատաղձը միագույն ու միատարր չլինի. կերպարները խոսում են անթերի արևելահայերենով կամ արևմտահայերենով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Մշո, Սասնա, Վանի, Լոռվա և այլ բարբառների ու խոսվածքների գունավորմամբ: Հարուստ է Հր. Քոշարի ստեղծագործությունների բառապաշարը: Նա բառերի, արտահայտությունների ու դարձվածքների պակաս չի զգում: Այն, ինչ պակասում է գրական լեզվում, նա վերցնում է ժողովրդի կենդանի խոսքից կամ գրաբարից՝ հաճախ դրանք ենթարկելով լեզվական մշակման: Նշանավոր արձակագրի ստեղծագործությունների շարադրանքն անբռնադրոս է, ազատ ու անկաշկանդ:

Հր. Քոշարի ստեղծագործությունների ընդհանուր բառապաշարը կարելի է բաժանել հետևյալ խմբերի. ա) ընդհանուր գրական կամ համագործածական բառեր, բ) ժողովրդա-խոսակցական, գ) բարբառային, դ) գրաբարյան բառեր և հնարանություններ, ե) օտարաբանություններ, զ) նորաբանություններ:

Բառապաշարի այս շերտերից հեղինակը տարբեր չափերով է օգտվել. դրանց ճնշող մեծամասնությունն ընդհանուր գրական կամ համագործածական բառեր են, որոնք ըստ իմաստի բազմազան են և չեն սահմանափակվում կյանքի միայն մի բնագավառի հասկացությունների արտահայտման շրջանակներով:

Համագործածական բառերը կազմում են Հր. Քոշարի, ինչպես և ամեն մի դրողի, ստեղծագործությունների բառապաշարի գերակշռող մասը, արտահայտում են կենսականորեն անհրաժեշտ իմաստներ և անվանում են ամենասովորական առարկաները, գործողությունները, հարաբերությունները և այլն: Այդ բառերն աչքի են ընկնում նաև գործածության համեմատաբար մեծ հաճախականությամբ: Սա զգալի չափով պայմանավորված է գրողի ստեղծագործությունների թեմատիկայի բազմազանությամբ:

Կեղարվեստական գրականության բառապաշարի մեջ խիստ կարևոր են հուզ-արտահայտչական գունավորմամբ օժտված բառերը, որոնցով հեղինակն ավելի պատկերավոր է դարձնում ոճը: Հր. Քոչարը դրանք օգտագործում է բնության վերածնունդը, զարթոնքը, նրա գեղեցկությունները պատկերելիս, մարդկային հոգեկան որևէ գրավոր վերլուծելիս, այս կամ այն երևույթը կամ իրադրությունը գնահատելիս: Երբեմն Հր. Քոչարն այդ բառերով կերպարի խոսքին տալիս է փքուն, վերամբարձ տոն, հակադրելով նրան ուրիշներին, և կերպարը դարձնում է ծիծաղաշարժ (Օգսեն, Վասպուր, Գառնիկ Կարճիկյան և այլն): Այդպիսի բառեր են՝ անուրջ, ակնածանք, ակնդետ, անաղարտ, խորախորհուրդ, խոնջանք, խանդաղատանք, խարտյաշ, խուժել, հմայել, հազարացուլք, մորմոքել, մեղմաթով և այլն:

Հր. Քոչարի երկերի բառապաշարի մեջ զգալի տեղ են գրավում ծաղավրդախոսակցական բառերը: Ժողովրդախոսակցական բառեր գործածելիս Հր. Քոչարը հեղինակային և կերպարների խոսքի նկատմամբ ցուցաբերում է տարբեր մոտեցում, իսկ կերպարի լեզուն տիպականացնելիս նա, ըստ անհրաժեշտության, նկատի է ունենում նաև նրա ծագումը և տարբեր բարբառների ներկայացուցիչների խոսքին տալիս է ժողովրդախոսակցական և բարբառային որոշ երանգ: Հր. Քոչարի այդ վերաբերմունքը պարզ ու մեկին արտահայտվել է նրա «Խաչատուր Աբովյան» ուսումնասիրության մեջ, որտեղ նա դրում է. «Կեղծ ու հակառակիստական կլինեի քանաքեռցի գեղջուկին խոսեցնել գրաբարով կամ թեկուզ այն մաքուր ու գեղեցիկ գրական լեզվով, որով Աբովյանը թարգմանել է Ռուսոյի «Նոր էլոիզան»: Ժողովրդական լեզուն հնարավորություն բացեց լայն կերպով պատկերել հայկական գյուղացիական աշխարհը, նրա գույներն ու բույրերը: Եվ քանի որ Աբովյանը ինքն էլ որպես հեղինակ պիտի խոսեր այդ աշխարհի մարդկանց հետ, որոնց համար դրում էր, բնական է, որ պետք է խոսեր նրանց լեզվով» (IV, 104—105)¹:

Ժողովրդախոսակցական բառերը խոսքը դարձնում են կենդանի ու տիպական: Դրանք միջին շերտ են կազմում գրական հայերենի ու բարբառների միջև և բարբառային բառերին հակադրվում են նրանով, որ հասկանալի են տվյալ լեզվով խոսող ժողովրդական լայն զանգվածներին, այնինչ բարբառային բառերը գործածության նեղ շրջանակ ունեն և տեղայնացված են: Հր. Քոչարի արձակում համեմատաբար հաճախ հանդիպող ժողովրդախոսակցական բառերից են՝ շալակ, հոլիկ, արևկող, մարդամեջ, անթեղ, թուփուն, հարցմունք, կարոտություն, խնդիրք, հորիք, բոխշա, ճյուղք, փեշ, խուրջին, պուտուկ, խաչերկաթ, կոլոտ, տնարար, կեղտակուր, դարման, ճարել, դարիք, վարոց, աղունիկ, օթախ, կուտ (կորիզ), դադրել, սուփրա, բրդուճ, ջահել, դնդնալ, քեշա, էս, էդ, էն, էստեղ, էդտեղ, էնտեղ, ճանաչ, հանաք, կոտոշ, փոշմանել և այլն:

Այս բառերի միջոցով հեղինակը կերտում է ժողովրդական խոսքի գեղեցիկ նմուշներ, որոնք կենդանություն ու թարմություն են հաղորդում խոսքին, ասելիքը դարձնում շոշափելի: Գրողը վարպետորեն ընտրություն է կատարել այդ բառերի ու նրանց համանիշ գրական զուգահեռների միջև՝ գերապատվու-

¹ Այս և հաջորդ մեջբերումները կատարված են՝ Հր. Քոչար, Երկերի ժողովածու (6 հատորով), Երևան, 1964—1965 (այսուհետև նշվելու է հատորը, էջը), նույնի՝ «Սպիտակ գիրք», Երևան, 1965 (այսուհետև՝ ՍԳ):

թյունը տալով առաջիններին: Եթե փորձենք դրանց փոխարեն գործածել նրանց գրական տարբերակը, ապա խոսքը հաճախ կկորցնի իր հրապույրը, կդառնա դժգույն ու շոր: Հաճախ էլ գործածված ժողովրդախոսակցական բառի գրական տարբերակը իր իմաստով չի ծածկում նրան: Այսպես, գրական հոգեհիմքն իմաստով համապատասխանում է ժողովրդական դադրել բառը, որոնք Քոչարը գործածում է համապատասխան ոճերում: Դրանց միջև տեսնելով իմաստային ու ոճական նուրբ տարբերություն, նա այդ երկուսը երբեմն գործածում է միաժամանակ՝ ոճական աստիճանավորման նպատակով: Օրինակ՝ «Ուրիշները օրվա աշխատանքից հոգեհիմք, դադրած², քնում էին խոր քնով, իսկ Առաքելը քնել չէր կարողանում» (V, 647) կամ՝ «Ցերեկն աշխատում, հոգեհիմք, դադրում էին, երեկոյան կողք-կողքի նստելով խորհուրդ էին անում, թե վաղն ինչ անեն» (II, 471):

Հր. Քոչարի ստեղծագործությունների լեզվի ժողովրդայնության լավագույն արտահայտություններից են հարադրական և կրկնավոր բարդությունների առատ գործածությունները: Հարադրական բարդությունները ժողովրդական լեզվամտածողության յուրահատուկ արտահայտություններ են: Նրանք, համապատասխան համադրական կազմությունների համեմատությամբ, հաճախ արտահայտում են իմաստային տարբեր նրբերանգներ (համատ. շնչել-շունչ քաշել, հասկանալ-զլխի ընկնել, հիշել-միտը բերել, վերջացնել-զլուխ հանել, քնել-քունը տանել, լսել-ականջ դնել և այլն):

Հր. Քոչարի արձակում առատորեն գործածված են բազմազան հարադրություններ՝ անվանական, զուգադրական-բայական, անվանական բաղադրիչով բայական և այլն: Այդ հարադրությունները բազմազան են նաև ըստ խոսքի մասային պատկանելության: Դրանցից ավելի հաճախ գործածվածներն են. կրակ ու բոց, վարձ ու պատիվ, ազգ ու աշխարհ, ախ ու վախ, քիթ ու մուռ, բոլ ու բուսած, ծափ ու ծիծաղ, հարց ու փորձ, տակն ու վրա, խոսք ու զրույց, ձեն ու ծպտուն, հագնել-կապել, եփել-թափել, անցած-գնացած և այլն:

Հաճախ են հանդիպում նաև այնպիսի բայական հարադրություններ, որոնց առաջին բաղադրիչն անվանական հարադրություն է. օրինակ՝ ծափ ու շաքաշ տալ, հարց ու փորձ անել, տակն ու վրա անել, կտոր-կտոր անել, լաց ու կոծ անել, ախ ու վախ անել, ձեն ի ձեն ընկնել և այլն: Սրանց են հարում մի շարք դարձվածային արտահայտություններ (իդիոմ), որոնց մեծ մասը փոխաբերական իմաստ ունի և անթարգմանելի է՝ բերան բաց անել, քուն գալ աչքերին, հոգին դուրս գալ, զլուխը մահու տալ, զլուխը խառը լինել, մեղք առնել վիզը, սրտից արյուն գալ, խոսքի տակ շմնալ, շուռ տուր քշի անել, հոգուն մեղք անել, թախտից ցած դցել, ականջը ձեն ընկնել և այլն:

Հեղինակը մեծ վարպետությամբ է գործածում նշված կազմությունները: Օրինակ՝ «Դադրե՛ր ես, նուբար, հոգիս դուրս գա» (ՄԳ, 183), «Խաբար չունեմ, Ղուկաս, երդում կուտեմ, որ տեղեկություն չունիմ, մեղք չառնիմ իմ վիզ» (ՄԳ, 181) և այլն:

Քոչարի արձակում ժողովրդական լեզվամտածողության դրսևորումներից են դարձվածի արժեք ունեցող, երբեմն փոխաբերական իմաստ արտահայտող բառերի այս կամ այն չափով կայուն կապակցությունները: Օրինակ՝ «Նազեծ-

² Այս և հետագա ընդգծումները մերն են—Ե. Վ.:

դա *Բերութիւնն* մի ուրիշ բոստանի պղպեղ էր» (ՄԳ, 273), «Վարսո մի քսե, կրակ ու բոց քսե» (ՄԳ, 208), «Իրենց մեղք, իրենց վիզ, չհավատան՝ թող չհավատան» (ՄԳ, 88) և այլն:

Ժողովրդական կենդանի խոսք ստեղծելու գործում մեծ դեր ունեն կրկնավոր բարդութիւնները, որոնք առարկայի կամ գործողութիւնի հատկանիշներն ավելի ուժգնութեամբ ու շեշտված են արտահայտում: Սակայն Հր. Քոչարի արձակում, հարադրական բարդութիւնների համեմատութեամբ, կրկնավոր բարդութիւնները սակավ են: Թեև, ընդհանուր առմամբ, դրանց թիվն էլ քիչ չէ: Առավել հաճախ հանդիպող կրկնավորներից են՝ թելիկ-մելիկ, հոնգուր-հոնգուր, շուտ-շուտ, ուր-մուր, մեկ-մեկ, թուխ-թուխ, երկար-երկար, քանի-քանի, հին-հին, կուշտ-կուշտ, մուշ-մուշ, շատ-շատ, ուշ-ուշ, խոշոր-խոշոր, կում-կում, երբեմն-երբեմն և այլն:

Ժողովրդախոսակցական ծագում ունեն նաև նմանաձայնական բառերը: Հր. Քոչարը այս և նման բառերի միջոցով կարողացել է կենդանի ու բնական վերարտադրել իրականութիւնը, ասելիքը դարձնել զգայական ընկալման աստիճանի շոշափելի: Այդպիսի լեզվական միջոցների կիրառման հետևանքով ընթերցողը կարծես լսում է թռչունների դայլայլը, ռազմի որոտներն ու արկերի շառալը, գետի կարկաչունն ու անտառի սոսափիւնը: Հեղինակի գործածած նմանաձայնական բառերը ըստ խոսքի մասային պատկանելութեան գոյականներ, բայեր ու ձայնարկութիւններ են: Հր. Քոչարը այդ բառերի միջոցով ոչ միայն վերարտադրում է իրականութիւնը կենդանի ու ճշգրիտ ձևով, կերտում անզուգական պատկերներ, այլև ստեղծում է բանաստեղծական խոսք: Այսպես՝ «Թեև երկինքը չէր երևում, կանաչ սաղարթների միջից երևում էին նրա լայտառիկները, փոքրիկ հայելիների նման հստակ, կապույտ, Թեթև զեփուռից խշշում էին ծառերի սաղարթները, կարծես շուրջը մարդիկ էին փսփսում, թաքնված մարդիկ: Աբգամը լսեց սուլոցները, քիչ հետո թափոցներ՝ թա՛կ, թա՛կ, թա՛կ... Ձայնը մեկ լռում, մեկ կրկնվում էր, և ապա լսվեց մոտիկ, շատ մոտիկ՝ թա՛կ, թա՛կ, թա՛կ...»

Դա փայտիտրիկն էր կտուցով ծառը թափում, անտառի թռչուններն էին սուլում: Բնութիւնն ապրում էր իր հազարամյա կյանքով, մի հոգալի խոտերի մեջ ձայն էր տալիս՝ հո՛ւլ-հո՛ւլ... հո՛ւլ-հո՛ւլ... հո՛ւլ-հո՛ւլ...» (III, 482):

Ժողովրդախոսակցական ծագում ունեն Քոչարի գործածած մի շարք միջածանց³ ունեցող բայեր՝ զնգրտացնել, զրնգալ, քանդրտել, կոխկրտել, խրտնչել, թփրտալ, խոնչալ, շխկրտալ և այլն:

Հր. Քոչարի արձակը հարուստ է նաև մասնագիտական տերմիններով: Դրանց մեծ մասը ժողովրդականութիւն է ձեռք բերել և առանձին դեպքերում գործածութեամբ մոտեցել համագործածական բառերին: Հեղինակը դրանք գործածում է և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստով: Առանձնապես ոճաբանական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում այդ տերմինների փոխաբերական գործածութիւնները: Այսպես, «Պատերազմ և խաղաղութիւն» վիպակի երգիծական բնույթը հիմնականում պայմանավորված է նրանով, որ հեղինակը քաղաքական, ռազմական և դիվանագիտական ոճին պատկանող բառերն առատորեն գործածել է կենցաղային խոսքի մեջ: Նշված վիպակի հերոս Համո Գազազյանը երկու հարևանների «նախապատերազմյան» կյանքը

³ Այս բառերը միջածանցավոր են համարվում որոշ վերապահութեամբ:

ներկայացնում է հետևյալ ձևով. «Հենց սկզբից մեր հարաբերությունները խաղաղասիրական էին, և երևում էին փոխադարձ հարգանքի ու անկախության նախադաս թուր նշանները: Չկա որևէ չարագիծ հարց: Պետական ու ռոշումներով մենք օգտվում էինք մեղ տրված բնակարանային տարածությունից, նրանք իրենց տվածից: Պարզ է, որ ագրեսիայի որևէ վտանգ էլ չի եղել չէր կարող: Դեմառկացիներն զիջել նույնպես որոշվում էր: Կեսն զբաղեցնում էինք մենք, կեսը՝ նրանք: Սահմանային վեճեր էլ չկային, ապրում էինք կողք-կողքի հաշտ ու խաղաղ, և մայրս ամեն օր նորություններ էր հաղորդում մեր հարևանի տնտեսական և բարոյական կյանքի մասին» (I, 500): Իրենց գործածության լայն ծավալով աչքի են ընկնում նաև ռազմական, փիլիսոփայական, բժշկական, երաժշտական, գրականագիտական, աշխարհագրական, քաղաքական, իրավաբանական և այլ գիտությունների տերմիններ: Առավել հաճախ գործածվածներից են՝ փակադակ, ագուստ, հրակնատ, էվոլյուցիա, թուրք, պեսիմիզմ, դիալեկտիկա, անգինա, ախտանիշ, տենոր, սիմֆոնիա, սյուսետ, նորավեպ, մասսա, լանդշաֆտ, հասարակած, հորիզոն, նոտա, համաձայնագիր, դեսպան, հետաքննություն և այլն:

Հր. Քոչարի արձակում բարբառային բառերի և բառաձևերի գործածությունը սոսկ ոճական արժեք ունի: Այն նպաստում է կերպարի տիպականացմանն ու միջավայրի տեղայնացմանը: Հեղինակը վարպետորեն է գործածում բարբառային բառերն ու քերականական միջոցները: Նա մի քանի առանձնահատուկ գծերի միջոցով կարծես նկարում է բարբառի ուրվագիծը, բայց ոչ նրա մանրամասները: Այդ ձևով անվանի արձակագիրը կերտել է բազմաթիվ անդուգական կերպարներ, որոնք հայ գրականության նվաճումներից են (Նահապետ, Առաքել, Ժերոնի Մովսես, Կոստան պապ, սուտլիկ Սարո և այլն):

Հր. Քոչարի կերպարները ըստ բարբառային տարրերի գործածման բաժանվում են երկու խմբի: Առաջին և սովոր խմբի մեջ են մտնում արևմտահայ բարբառների կրողները, որոնց մեծ մասը կոտորածներից հրաշքով փրկված գաղթականներ են, երկրորդ խմբի մեջ՝ արևելահայ բարբառների կրողները: Գրողը բարբառային որոշ տարրերի միջոցով ստեղծել է բարբառային խոսքի պատրանք՝ առաջինների համար հիմք ունենալով արևմտահայ գրական լեզուն, վերջինների համար՝ արևելահայ: Այդպիսի բառերից են՝ խորոտիկ, հերսոտել, հալիվոր, հորի, փլցուց, լառ, արխ, մարե, թալել, չոք, քելել, շուք, տնաքանդ, շառ, խարաբա, խարջել, հարհանդ, բուլ, խեր, հեյրան, դուրան, էլման, փահլեան, մակուլ, հառիք, մարխոշ, պետ-պետ, ջեհկ, ջոշ, օղորթ, ցխկվել, բառոժ, ուզնկան, փլեր, մուժ ու դուման և այլն:

Հեղինակը բարբառներից ընտրում է այնպիսի բառեր, որոնք իրենց ընդգրկման և գործածության շրջանակների լայնությամբ մոտենում են ժողովրդախոսակցական բառերին: Դրա համար էլ նրա այդ կարգի ստեղծագործությունները, պահպանելով ժողովրդական խոսքի գույները, մատչելի են ու հարազատ ընթերցող լայն հասարակայնությանը:

Հր. Քոչարի ստեղծագործությունների բառապաշարի ոչ մեծ խումբն են կազմում ճարտարաբանական բառերն ու հնաբանությունները, որոնք խոսքին պատմական երանգ են տալիս: Նա թեև զուտ պատմական թեմատիկայով գրած շատ քիչ ստեղծագործություններ ունի («Նոյնիներ», «Սյունեցիներ»), սակայն գրեթե բոլոր գործերում կան մեր կամ եղբայրական ժողովուրդների պատմական անցյալին վերաբերող հատվածներ, ակնարկներ, որոնք ինքնա-

նպատակ չեն և սերտորեն ձուլվում են նրա կերտած կերպարների ճակատագրին: Սակայն պատմական անցյալին վերաբերող այդ ակնարկ-հատվածներում և ամբողջական գործերում հեղինակը վարպետորեն ու չափավոր է գործածում գրաբարյան բառերը: Դրանցից են՝ կեղծ ու պատիւր, անգոսնել, տեսանել, կորնչել, անսալ, հարյավ, այր, վասն, խոչ, նզովյալ և այլն:

Հր. Քոչարը անցյալի պատմական գունավորում է ստեղծում նաև այնպիսի բառերով, որոնք ժամանակակից հայերենում սահմանափակել են իրենց գործածության շրջանակները: Դրանք կամ հնաբանություններ են, կամ զբոսնում են այդպիսիք դառնալու ճանապարհին: Դրանցից են՝ աղա, խանում, ծխատեր, վանահայր, համբառնալ, կուսակրոն, քարող, արշին, օվսաննա, հրեշտակ, միանձնուհի, սաղմոս, տիրուհի, թավադ, երկնավոր, նշխար, երեց, ռես, գզրար, մեղապարտ, նազիր, վեզիր և այլն:

Հեղինակը գրաբարյան որոշ բառեր կամ քերականական ձևեր օգտագործում է վսեմ պաթետիկ խոսք կերտելիս: Օրինակ՝ «Եվ նույնքան հաստատուն է մեր ընթացքը, ինչպես արեգակն ճանապարհը դեպի արևելք...» (III, 208), «Հենում են սովետական հզոր ու մարտական քայլերգերը, և հոգուդ մեջ որոտում է մի ձայն, միայն մի ձայն, անկեղծ ու ճշմարիտ, ի խոցոց սրտի» (V, 103):

Օտարաբանությունների գործածությունը գեղարվեստական երկի մեջ պետք է անսլայման պատճառաբանված լինի: Հր. Քոչարի երկերում դրանք դործածվում են կերպարների խոսքը տիպականացնելու նպատակով: Ինչպես նշվեց, նրա կերպարները մեր բազմազգ ժողովրդի ներկայացուցիչներն են՝ «մեծ տան զավակները», նաև թուրքեր, անգլիացիներ, իրանցիներ, քրդեր և այլն: Բնականաբար, նրանց խոսքը տիպականացնելու համար հեղինակը պետք է օգտվեր օտարաբանությունից:

Հր. Քոչարի գործածած օտարաբանությունները կարելի է բաժանել երկու խմբի. ռուսերեն և այլ լեզուներով բառեր (թուրքերեն, քրդերեն, վրացերեն և այլն):

Քոչարի արձակում նկատվում է հետևյալ միտումը. նա ռուս կերպարների խոսքում ավելի քիչ ռուսերեն բառեր է գործածում, քան որոշ հայ կերպարների խոսքում: Դա հետևում է նրանից, որ ռուս կերպարների ամբողջ խոսքը բնականում ռուսերեն է, և հեղինակը խոսողի մտավոր զարգացման աստիճանին համապատասխան հայերեն բառական միջոցներով տիպականացնում է այդ խոսքը, իսկ հայ որոշ կերպարներ, որոնք իրերի բերումով ռուսական միջավայրում են ապրել, իրենց հայերեն խոսքի մեջ գործածում են նաև ռուսերեն բառեր, մի բան, որը կերպարը տիպականացնելու լավագույն միջոց է: Այդ ձևով հեղինակը տիպականացրել է թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ որոշ կերպարների խոսքեր: Ահա մի հատված «Մեծ տան զավակները» վեպի կերպար Արշակ Ֆերանյանի խոսքից. «Պարծանք չըլլա, ընկեր պետ, հակառակը կասեն միշտ՝ Մալադեց Արշակ Ֆերանյան, կըսեն, խրապրի վողիտել: Եվ պարզևատրված եմ Զա աթվազու նշանով: Հայ անունը անպատիվ չեմ ըներ, ընկեր պետ» (IV, 214):

Ռուսերեն օտարաբանությունները հեղինակը բերում է կամ հայերեն տառադարձությամբ (ինչպես վերևի օրինակում), կամ ռուսերեն գրությամբ Օրինակ՝ «Сколько лет, сколько зим, Тигран Иванович... Ա՛, բալամ, բա չե՞ս ամաչում, որ էս կողմերը չես գալիս, քու արևը վկա, կարոտում ենք»:

Համա здорово ты влюбился Дементьева, հենց գիդում ես մենակ նա՞ է կովում ու մենք կռիվ չե՞նք անում...» (III, 274):

Հր. Քոչարը բազմաթիվ գունեղ պատկերներ է կերտել արևելյան լեզուների բառերի տեղին գործածությամբ, նման բառերի միջոցով նա կարողացել է տիպականացնել մի շարք կերպարներ (Նադո, Սայրե, Խաչե, Թալեաթ փաշա, Մեսրոպ էֆենդի և այլն): Ահա քուրդ առաջնորդ Նադոն, որը դժգոհում է տիրող թուրքական կառավարությունից. «Ռամեն չի թողնում, որ մեր լեզվով խոսենք, մեր քաղաքը մեր գլխին դնենք, մեր փաշին կապենք» (ՍԳ, 105):

Ինչպես Հր. Քոչարի, այնպես էլ ամեն մի գրողի ստեղծագործության մեջ նորաբանությունների քանակի ստույգ որոշման հարցը մեծ դժվարությունների հետ է կապված, քանի որ չունենք գրական լեզվի լիակատար որևէ բառարան, որի հետ համեմատելով հնարավոր լինի ճշգրտորեն պարզել այս կամ այն հեղինակի նորակերտ բառերի քանակը:

Հր. Քոչարի կերտած նոր բառերն ըստ իմաստի բազմազան են: Նրանց մի խմբին անդրադարձել է Հ. Կոստանյանը⁴: Դրանք միատարր չեն նաև ըստ կազմության, որոնց մի ստվար խումբն առաջացել է բառաբարդման ճանապարհով: Առավել տարածվածներն առաջացել են՝

ա) գոյականներից՝ աղուրանախշ⁵, անտառեզր, անտառածոր, անտառաշուրթ, աշխարհավերաբերմունք, բոցափունջ, հայհոյագիր, նավթլամպ, որմնաթախտ, փոսախորշ, փշափունջ, ոտնալաթ, ոտնափաթաթան⁶ և այլն: Այս կազմությունների մեջ առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է և հիմնականում ունի սեռական հոլովի իմաստ (հմմտ. անտառեզր-անտառի եզր, փշափունջ-փշի փունջ և այլն):

բ) Ածականի և գոյականի համադրությամբ՝ այս ձևով առաջացած նորաբանություններն ածականներ են և արտահայտում են մի բանով օժտված լինելու, մի բան ունենալու իմաստներ: Դրանք հիմնականում հոդակապով բարդություններ են: Օրինակ՝ առատաբույր, առողջակութք, բազմաոճ, բազմատարազ, խոշորաեղջյուր, կապտափետուր, կարմրակեղև, կլոբասաղարթ, հսկայատեսիլ, հսկայատիպ, մանրահյուս, մեծադյուցմ, շիտակիրան, սպիտակաբոց, վառկարմրակազմ, քաշնորհք և այլն: Այս բարդությունների մեջ առաջին բաղադրիչը երկրորդի որոշիչ լրացումն է:

գ) Գոյականի և բայարմատի միացումով՝ բոցահան, ծխարձակ, կենսագետ, սաղարթահակ, լրատար, նշանաձիգ և այլն: Այս բառերն ունեն գործողի կամ եղողի, ինչպես նաև մի բանով օժտված լինելու իմաստ: Սրանց առաջին բաղադրիչները երկրորդների խնդիր լրացումներն են: Ըստ խոսքի մասային պատկանելության այդ բառերը գոյականներ և ածականներ են:

⁴ Հ. Հ. Կոստանյան, Ակնարկներ վերջին տասնամյակի սովետահայ արձակի լեզվի և ոճի մասին, Երևան, 1957, էջ 21:

⁵ Այս և հետևյալ բառերը, որոնք մեկ կամ մի քանի անգամ գործածված են Հր. Քոչարի ստեղծագործություններում, չկան Ստ. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանում», Ա. Սուբխանյանի «Հոմանիշների բառարանում» և այլուր: Այդ բառերը, եթե ոչ ամբողջությամբ, գտնվում են մասով հավանաբար Քոչարի ստեղծածներն են:

⁶ Ստ. Մալխասյանի բառարանում ոտնաթաթ բառը կա (հ. III, Երևան, 1944, էջ 576):

Վերը նշվածների համեմատությամբ սակավաթիվ են հետեյալ կադմոթյունները.

տ) Մակբայ-բայարմատ կամ ածական՝ հանդարտահունչ, մշտալուրջ և այլն:

բ) Ածական-բայարմատ՝ ահեղացունց:

գ) Գոական-կապ՝ արջանման, փղաշավ:

դ) Թվական-դոյական՝ հազարադրորդ:

Հր. Քոչարի ստեղծագործությունների բառապաշարում առանձնահատուկ ուշադրության են արժանի գունային նրբերանգներ արտահայտող մի շարք հարադրական կադմոթյամբ ածականներ, որոնց ճնշող մեծամասնությունը նորակազմ է: Արվեստագետի նրա նուրբ զգացողությունը որսում է գույների խաղը, որի միջոցով էլ հեղինակը այնքան նրբորեն ու կենդանի է վերարտադրում լուսաբացի ու մթնշաղի, կեսօրի ու լուսնկա գիշերվա, ծովի ալիքների ու մառախլապատ լեռների բնորոշ գույները: Գույների նման համադրությունները լեզվական միջոցներով վերարտադրելու համար հարադրական բարդությունների դերն անգնահատելի է: Այդպիսի հարադրություններից են՝ բաց-փիրուզագույն, բաց-գորշավուն, դորշ-սպիտակավուն, գորշ-կանաչավուն, կանաչ-կապույտ, կաղճնագույն-սպիտակ, կարմիր-գորշավուն, կապույտ-կապտակապույտ, մոխրագույն-գորշ, մուգ-կաթնագույն, մուգ-կարմիր, մուգ-ցորնագույն, մուգ-դարչնադույն, մուգ-դորշ, մուգ-արյան դույն, մուգ-սև, շոգուն-կանաչ, սպիտակ-դորշավուն, սպիտակ-դեղնավուն և այլն:

Հեղինակը գունային նրբերանգներ արտահայտելու համար օգտվել է ոչ միայն գույն արտահայտող ածականներից, այլև այս կամ այն գույնի համար բնորոշ առարկայից: Օրինակ՝ կաթնագույն, կավագույն, դարչնագույն, մոխրագույն, կաղճնագույն, սառցագույն, մոմագույն, կրակագույն, հրագույն և այլն: Նրբեմն էլ նա գործածում է և՛ բնորոշ առարկան, և՛ համապատասխան գույնը: Օրինակ՝ կարմիր ելակ, բոցակարմիր, կաղճնագույն սպիտակ, կաթնագույն սպիտակ և այլն. «Նրա կողքին նստած էր ինձնից մեկ-երկու տարով մեծ իր տղան, կաբմիք ելակ հագած, կապույտ արաղչին գլխին, կարմիր շավարով ու կարմիր բաբուլներ հագած» (ՄԳ, 31), «Մուգ-կապույտ մշուշն արդեն կաթնագույն սպիտակ էր դառնում, ձյունապատ դաշտերն սկսում էին շոգալ առատացող լույսից» (IV, 140):

Հր. Քոչարի նորաբանությունների շարքում առանձնակի ուշադրության են արժանի այն բարդությունները, որոնցում առաջին բաղադրիչը երկրորդի մեջ երկու անգամ կրկնվում է, այսինքն՝ մի բառի մեջ նույն արմատը կրկնվում է ոչ թե երկու, այլ երեք անգամ: Այդպիսի բառերի գործածությունը երաժշտականություն ու բանաստեղծականություն է հաղորդում խոսքին, միաժամանակ ամբողջ բարդությունն արտահայտում է առաջին բաղադրիչի իմաստի սաստկական աստիճանը: Բարդության մեջ այդ իմաստն անդրադարձվում է բաղմաղան ձևերով: Այդպիսի կրկնավորներ են՝ շողալ-շողշողալ, փոխել-փոփոխել, չափել-չափչափել, խելել-խլխլել, ցուլալ-ցուցուլալ, փայլել-փայլիլ, մարել-մարմրել, գոչել-գոչգոչել, դողալ-գողգողալ և այլն: Օրինակ՝ «Մի երկու անգամ գարունը երևաց, շողաց-շողշողաց փետրվար ամսվա մեջ ու ես գնաց դարձյալ» (ՄԳ, 201): «Առավոտյան հովը խփում էր դեմքիս կամաց-

կամաց մարմրելով, խունանում էին ասաղերը երկնքում. միայն մեկն էր ցուլում-ցուլում մեր հայացքի առջև (ՄԳ, 26) և այլն:

Քիչ չեն նաև Հր. Քոչարի կերտած ածանցավոր նորաբանությունները: Դրանցից են՝ պատանհանալ⁷, մրրկալի, մերձազմաճակատալին, անկոր, լուլալվել, դալկել⁸, խաժամուժվել, կաթնագունել, բռնցքվել (հավաքվել իմաստով)⁹, անընկալելի, տանկիկ, տորքանգեղյան, դիտոց, ստրատեգիակա-նորեն, հայրականորեն, առատախոսություն, ներքնազգացողություն, շուրու-խություն, ծառածաղկում, անձնվիրում, ընդհատում, թոռում, խաղացկուն, ճլպտուն, ցնորուն և այլն:

Հր. Քոչարն առատությամբ գործածել է -ուն ածանց ունեցող բառեր, որ պետք է համարել նրա ստեղծագործությունների բառապաշարի առանձնա-հատկություններից մեկը: Դրանցից են՝ բորբոքուն, երերուն, ցնծուն, տարա-ծուն, ցոլուն, հորդուն, ծաղկուն, ժպտուն, նվազուն, շառաշուն և այլն: Այս-պես՝ «Բարձրից, շատ բարձրից գնում էր մի օդանավ ընդհատուն նվոցներով» (III, 50): «Օրորվում էր ծաղկած մասրենին մեկ բորբոքուն, շեկ խարույկի նման, մեկ դեղնեիրանգ, մեկ բաց-գորշավուն տերեւներով» (III, 386):

Ածանցավոր նորաբանություններն ըստ խոսքի մասային պատկանելու-թյան գոյականներ, ածականներ, բայեր ու մակբայեր են: Դրանք մեծ մա-սամբ հաջող կազմություններ են: Համեմատաբար անհաջող են -ուրեն ածան-ցով որոշ մակբայներ և -ուրյուն, -ում ածանց ունեցող մի շարք բառեր:

Հր. Քոչարը մակբայներ ու գոյականներ է կերտել նաև այնպիսի բառե-րից, որոնք նույն իմաստն արտահայտելու համար սովորաբար այլ ածանցներ են ստանում. ինչպես օրինակ՝ հայրուրեն, որի փոխարեն հայերենում օգ-տագործվում է հայրաբառ բառը և այլն: Հր. Քոչարի ստեղծագործություն-ների բառապաշարում կան նաև այնպիսի բառեր, որոնք կազմվել են հայ բարբառներից հատուկ բառակազմական ճանապարհով: Ինչպես հայտնի է, -Է հոգնակերտ մասնիկը ժամանակակից հայերենում դադա-րել է քերականական դեր կատարելուց և վեր է ածվել բառակազմական ա-ծանցի: Գրական հայերենի բարդություններում այդպիսի բառերի Է-ն ընկ-նում է: Հր. Քոչարը մի շարք բառեր կազմում կամ օգտագործածում է՝ պահ-պանելով նշված ածանցը: Օրինակ՝ անկերպարանք¹⁰, արևելքի, սրաթուխ¹¹, նրբադեմ¹², ճյուղեր և այլն: Սրանց գրական ձևերն են՝ անկերպարան, ա-րևելքի, սրաթուխ, նրբադեմ, ճյուղեր:

Այսպիսով՝ Հր. Քոչարի ստեղծագործությունների բառապաշարը բավա-կանաչափ հարուստ է, որի հիմնական և սովոր մասն են կազմում ընդհանուր գրական բառերը:

7 Ալ-ել մասնիկները զետեղված են ածանցների շարքում՝ նկատի ունենալով նրանց բառա-կազմական ֆունկցիան:

8 Ստ. Մախասյանի բառարանում կա զալկալալ բառը (հ. II, էջ 483):

9 Նույն բառարանում այս բառն ունի բռնցքով ծեծվելու իմաստ:

10 Ստ. Մախասյանի բառարանում կա անկերպարալ տարբերակը:

11 Նույն բառարանում կա սրաթուխ բառը:

12 Ա. Սուքիասյանի բառարանում կա երբադեմ բառը:

Բառապաշարի մյուս խմբերը՝ ժողովրդականացած, բարբառային, գրաբարյան, օտարաբանություններ, ծառայում են կերպարների և համապատասխան միջավայրի տիպականացմանը: Դրողը որոշակի աշխատանք է կատարել բառաստեղծման գործում:

ЛЕКСИКА ПРОИЗВЕДЕНИЙ Р. КОЧАРА

Е. Г. ВАРДАНЫАН

Резюме

Тематика прозы Р. Кочара отличается широтой и разнообразием, что обуславливает богатство характеров и многогранность созданных им образов. Его герои—представители разных национальностей и общественных слоев. При достижении типизации образов Кочар проявляет, с одной стороны, глубокое понимание жизни, умение глубоко анализировать явления, с другой—способность умело пользоваться богатыми возможностями нашего языка.

Богата лексика произведений Р. Кочара, состоящая из общеупотребительных, народно-разговорных, диалектных, древнеармянских, иноязычных слов и неологизмов. Подавляющее большинство словарного состава прозы Кочара составляют общеупотребительные слова.

Особо важную роль в прозе Кочара играют народно-разговорные слова, занимающие промежуточную позицию между литературной и диалектной лексикой. Диалектизмы, архаизмы и иностранные слова также получили своеобразное преломление в прозе Кочара.

Р. Кочар создал много неологизмов, часть которых прочно вошла в литературную лексику.